GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
STUDENT SUPPORT SERVICES
223 North Jackson Street
Glendale, California 91206
(818) 241-3111

11-րդ դասարանի հարգելի ծնողներ/օրինական խնամակալներ և նորեկ աշակերտներ,

Մենք հպարտ ենք ձեզ ներկայացնել Քլարք մագնետ ավագ դպրոցը: Մրցանակակիր քառամյա մասնագիտացված դպրոց, որն առաջարկում է խստապահանջ ուսումնական ծրագիր՝ իր շեշտը դնելով գիտության, մաթեմատիկայի և առաջադեմ տեխնոլոգիաների ուսուցմանը: Մեր ուսումնական ուղին՝ ճարտարագիտություն, բնապահպանություն, կինոմատոգրաֆիա, անիմացիա, ձևավորում, համակարգչային ծրագրերի կոդավորում, կիբեր անվտանգություն, գործարք և լուսանկարչություն դասընթացներն են, որոնք հնարավորություն են ստեղծում, որպեսզի աշակերտները միաժամանակ նախապատրաստվեն քոլեջի և ապագա կյանքի համար:

Քլարք մագնետ ավագ դպրոցի առաքելությունն է ազգությամբ բազմազան աշակերտներին ապահովել տեխնոլոգիայի անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով, այս մրցունակ աշխարհում հաջողություններ գրանցելու համար: Քլարքի շրջանավարտները կունենան այն հիմունքները, որոնք անհրաժեշտ են իրենց ակադեմիական և մասնագիտական նպատակներին հասնելու համար, հաջողությամբ մրցակցելու համաշխարհային շուկայում և իրենց ողջ կյանքի ընթացքում լինելու ստեղծագործ, քննադատ, վերլուծող և անվերջ սովորողներ:

Ուսման ոլորտները ուսումնական ուղղվածություն են տալիս մեր աշակերտներին: Յուրաքանչյուր ոլորտի ուսումնասիրության նկարագիրը տրված է ստորև.

- **Մաթեմատիկա, գիտություն և ճարտարագիտություն-** Հիմնական ուսումնական դասընթացներ՝ ներառելով մաթեմատիկայի, ֆիզիկայի և ճարտարագիտության բարձր մակարդակները:
- **Տեխնոլոգիական համակարգեր-** Նախագծային հիմունքներով ընտրովի դասընթացներ՝ մասնագիտական շեշտադրումը դրված՝ մեքենաշինության նախագծման, ռոբոտաշինության, արտադրության գործընթացների, արտադրանքի մշակման և համակարգչային օժանդակ արտադրության ոլորտների վրա:
- **Կիբառական տեխնոլոգիա** -Կինոմատոգրաֆիայի, համակարգչային ծրագրավորման, ճարտարապետության և աշխարհագրական տեղեկատվական համակարգերի նախագծով (GIS) դասընթացներ:
- **Թվային արվեստ (Digital)** - Ծրագրային հիմունքներով ընտրովի դասընթացներ համակարգչային անիմացիայի, ձևավորման և թվային լուսանկարչության ոլորտներում:

Քլարքն առաջարկում է՝ **առաջադեմ մակարդակի 19 դասընթացներ,** լրացուցիչ աջակցություն ուսուցման համար, block-scheduling, և բազմաթիվ խմբակների լայն ընտրություն մեր տաղանդավոր և բազմակողմանիորեն զարգացած աշակերտների տարբեր ուսումնական և արտադասարանային կարիքները բավարարելու համար: Լրացուցիչ մանրամասնությունների համար այցելեք **www.gusd.net/clarkhs կայքէջը:**

Դիմումներն ընդունվում են 2023 թ. հունվարի 8-ից մինչև հունվարի 31-ը: Դիմումները հասանելի են միայն առցանց https://glendale.schoolmint.com կայքում: Բոլոր դիմորդները պետք է Գլենդելի բնակիչ լինեն և բնակվեն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սահմաններում: Ներկայում, ակնկալվող 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում բաց տեղեր դեռ չկան: Իրավասու բոլոր աշակերտները կարող են դիմել. նրանց անունները կդրվեն սպասացանկում: Երբ տեղ բացվի ընտանիքները կտեղեկացվեն իմեյլի միջոցով: Նրանց կտրվի 5 օր, ընդունելու կամ մերժելու առաջարկը: Եթե ընտանիքը մերժի կամ չպատասխանի առաջարկին, ապա առաջարկը չեղյալ կհամարվի և առաջարկ կտրվի սպասացանկ մի այլ դիմորդի:

Հարցերի դեպքում մի հապաղեք զանգահարել Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակ հետևյալ հեռախոսահամարով՝ (818) 241-3111 ներքին թիվ՝ 1283:

Հարգանքներով,
Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան

GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
STUDENT SUPPORT SERVICES
223 North Jackson Street
Glendale, California 91206
(818) 241-3111

ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Դիմումներն ընդունվում են **2023 թ. հունվարի 8-ից մինչև հունվարի 31-ը:**
2. Դիմումները հասանելի են **ՄԻԱՅՆ** առցանց **https://glendale.schoolmint.com** կայքում: Եթե ինտերնետային կապի միջոց չունեք, կարող եք մինչև **2023 թվականի հունվարի 31-ը, ժամը՝ 4: 30-ը**, այցելել կրթաշրջան՝ 223 N. Jackson Street, Room 203, Glendale, առցանց անձամբ դիմում լրացնելու համար: ԲՈԼՈՐ դիմումները ստուգվում են իրավասության համար: Միայն իրավասու դիմորդները կդիտարկվեն առկա տեղերի համար:
3. Ակնկալվող բաց տեղեր 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում դեռ անհայտեն չեն ներկայում:: Բոլոր իրավասու աշակերտները կարող են դիմել, բայց սպասացուցակին կդրվեն:
4. Ընդունման առաջարկը կախված է 10-րդ դասարանի երկրորդ կիսամյակի գնահատականների վերանայման հիմունքներից :
5. Ընդունված աշակերտների համար գրանցման և կողմնորոշման օր կնշանակվի: Աշակերտները և ընտանիքները կտեղեկացվեն: **Գրանցվելուց հետո ակնկալվում է, որ աշակերտները Քլարքում մնան ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:**
6. 2023 թվականի հունվարի 31-ից հետո ներկայացված դիմումները չեն ներառվի էլեկտրոնային վիճակահանությունում: Ուշացած իրավասու դիմորդների անունները ժամանակավոր սպասացուցակում կտեղադրվեն:

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. 1. GPA (միջին գնահատական)– պետք է ունենա 2.0 կամ ավելի բարձր միավոր միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի երկու կիսամյակներում և 10-րդ դասարանի առաջին կիսամյակում:

2. Ուսումնական. . Ի լրացում 2.0+ GPA-ի, «C» կամ ավելի բարձր գնահատական ունենա միջին դպրոցի հիմնական դասերից. անգլերեն, մաթեմատիկա, գիտություն և սոցիալական գիտություն, 9-րդ և 10-րդ դասարանների չորս քառորդներին (ավարտելով մասնակցելու վիճակահանությանը: Վիճակահանության միջոցով ընտրված աշակերտների գնահատականները ստուգվելու են 10-րդ դասարանի վերջում, վստահանալու, որ աշակերտը վաստակել է առնվազն «C » կամ ավելի բարձր գնահատական: Եթե հիմնական դասերից որևէ մեկը 10-րդ դասարանի ավարտին «C» -ից ցածր, է ապա ընդունման առաջարկը կհանվի:

3. **Հաճախումներ** – Դիմորդները պետք է ունենան բավարար հաճախում, ոչ ավելի, քան 18 լիօրյա բացակայություն՝ հարգելի կամ ոչ հարգելի: Նշում. COVID-ի և/կամ կարանտինի պատճառով բացակայությունները չեն համարվի որոշիչ գործոն աշակերտի դիմումի իրավասության հարցում:

4. Վարքագիծ. Դիմորդները պետք է ունենան բավարար վարք, ոչ ավելի քան 5 դպրոցական կանոնների խախտումներ, և ոչ ավելի քան երկու «U» անբավարար գնահատական քաղաքացիությունից՝ 9-րդ 10-րդ դասարանում: Վարքագիծը ստուգվելու է 10-րդ դասարանի վերջում:

5. Բնակավայր. Քլարք մագնետ ավագ դպրոց դիմորդները պետք է բնակվեն GUSD-ի սահմաններում: **Այն աշակերտները, ովքեր հաճախում են GUSD-ի միջկրթաշրջանային թույլտվությամբ, իրավասու ՉԵՆ դիմել:**

6. Եթե դուք GUSD- ի սահմաններում եք բնակվում, բայց GUSD-ի դպրոց չեք հաճախում, խնդրում ենք ձեզ հետ բերել երկու ձև՝ բնակությունը հաստատող փաստաթուղթ, 5-րդ էջի (#17) ծնողի/ խնամակալի անունով, 9-րդ և 10-րդ դաս. գնահատականների պաշտոնական փաստաթուղթը՝ ներկայիս դպրոցից և կարգապահական գրառումները ներկայիս դպրոցից **և** ներկայացնել՝ Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակ՝ 223 N. Jackson, Room 203, Glendale, CA 91206 հասցեով:

7. Համաձայն GUSD-ի Վարչական կանոնակարգի 5116.1-ի, միջկրթաշրջանային թույլտվության ունեցող աշակերտները պետք է պահպանեն դպրոցի բոլոր կանոններն ու ընթացակարգերը, նրանք կշարունակեն հաստատված դպրոցում ուսումը շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ հաճախումները, վարքը և ուսումնական առաջադիմությունը բավարար են ընդհանուր ուսումնական ծրագրում: Այն աշակերտներն, ովքեր պահանջվող նվազագույն չափանիշների մակարդակից ցածր են, միջկրթաշրջանային թույլտվությունը կչեղարկվի՝ GUSD 0420.5 վարչական կանոնակարգի համաձայն, և աշակերտը կտեղափոխվի իր բնակավայրի դպրոցը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
STUDENT SUPPORT SERVICES
223 North Jackson Street
Glendale, California 91206
(818) 241-3111

1. **Որո՞նք են ուսումնական պահանջները CMHS հաճախելու համար:**
Աշակերտը պետք է ունենա «C» կամ ավելի բարձր գնահատական ավագ դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանի երկու կիսամյակներում, հիմնական առարկաներից. անգլերեն, մաթեմատիկա, գիտություն և սոցիալական գիտություն:

2. **Արդյոք 10-րդ դասարանի ավարտական գնահատականները կքննարկվե՞ն ընդունման գործընթացում:**
Այո: Հունիսի գնահատականները կվերանայվեն 10-րդ դասարանի ավարտին:

3. **Արդյոք բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներն ընդունման ավելի լավ հնարավորություն ունե՞ն:**
Ոչ. Բոլոր աշակերտները, ովքեր ունեն «C» կամ ավելի բարձր դասարանային միջին, հիմնական դասերից, ունեն նույն շանսը և հավասար հնարավորությունը:

4. **Որո՞նք են մաթեմատիկայի պահանջները CMHS հաճախելու համար:**
Բոլոր աշակերտները ՊԵՏՔ Է վաստակեն «C» կամ ավելի բարձր գնահատական մաթեմատիկայից 10-րդ դասարանի առաջին կիսամյակում:

5. **Արդյոք աշակերտի պահվածքն ու հաճախումները դեր ունե՞ն ընդունման համար:**
Այո: Բավարար վարք, (դպրոցական կանոնների ոչ ավելի քան 5 ընդհանուր խախտում կամ ոչ ավելի քան երկու «U» անբավարար գնահատական քաղաքացիությունից, վերջին երեք կիսամյակների ընթացքում:) Դիմորդները պետք է ունենան բավարար հաճախում, ոչ ավելի, քան 18 լիօրյա բացակայություն՝ հարգելի կամ ոչ հարգելի: **COVID-ի և հարակից կարանտինային պատճառով բացակայությունը որոշիչ գործոն չէ աշակերտի դիմումի իրավասության հարցում:**

6. **10-րդ դասարանում իմ երեխայի գնահատականները 2.0-ից ցածր էին, բայց նա այս կիսամյակում շատ ավելի լավ է կատարում: Նրան հնարավորություն կտրվի՞:**
Ոչ: 11-րդ դասարան եկող բոլոր աշակերտների գնահատականները վերանայվում են իրենց 10-րդ դասարանի պաշտոնական գնահատականների հիմունքներով:

7. **Արդյոք CMHS-ում սովորելն այնքան դժվա՞ր է, որքան ասում են մարդիկ: Ի՞նչ աջակցություն է ցուցաբերվում դժվարացող աշակերտներին:**
Քլարքում սովորելը դժվար է, և աշակերտները պետք է աշխատեն հաջողության հասնելու և այն պահպանելու համար, քանի որ Քլարքն առաջարկում է խստապահանջ կրթական ծրագիր, որը նախատեսված է աշակերտներին քոլեջի և մասնագիտության նախապատրաստելու համար: Ամեն օր, աշակերտները կարող են օգնություն խնդրել ուսուցիչներից կամ իրենց հասակակիցներից: Բացի այդ, կան մի շարք օժանդակ ծառայություններ, ներառյալ՝ հոգեբանները, խորհրդատուները և միջամտության դասընթացները: Մենք աշխատում ենք որպես խումբ, որպեսզի աշակերտներին ամուր հիմք և օժանդակող համակարգ ապահովենք, որպեսզի նրանք հաջողությունների հասնեն:

8. **Ի՞նչ է բարելավման (enrichment) դասաժամը**
Յուրաքանչյուր օրվա վերջում 35 րոպեանոց բարելավման դասաժամ կա, որի ընթացքում աշակերտները կարող են կատարել իրենց տնային աշխատանքը, դիմել ուսուցիչների օգնությանը, մասնակցել խմբակների կամ իրենց հասակակիցների հետ նախագծերի վրա աշխատել:

9. **Արդյոք CMHS- ն աշակերտներին առաջարկու՞մ է օտար լեզվի դասավանդումներ:**
Իսպաներենը Քլարքում առաջարկվող միակ օտար լեզուն է:

10. **Կարո՞ղ են հատուկ կարիքներ ունեցող աշակերտները հաճախել Քլարք:**
Այո: Բոլոր աշակերտները կարող են դիմել, եթե բավարարում են պահանջները: CMHS-ը **չի առաջարկում** առանձին Մասնագիտացված ուսուցման դասեր կամ ինքնապարփակ դասարաններ , հատուկ կարիքներ ունեցող աշակերտների համար:

11. **Կարո՞ղ են աշակերտները դասեր վերցնել GCC-ում, երբ դեռ Քլարքում են:**
CMHS-ը համագործակցություն ունի GCC-ի հետ՝ CMHS-ի բոլոր աշակերտների համար, «Jump Start» և «Dual Enrollment» ծրագրերի միջոցով: Մենք խորհուրդ ենք տալիս բոլոր աշակերտներին մասնակցել երկգրանցման դասընթացներ, ինչը նրանց հնարավորություն է տալիս միաժամանակ վաստակել ավագ դպրոցի ավարտական և քոլեջի կրեդիտներ (3 GCC կիսամյակային միավոր = 10 ավագ դպրոցի քրեդիտներ):Սա հնարավորություն է տալիս աշակերտներին մեկ կիսամյակի ընթացքում մեկ քոլեջի դաս վերցնել:

12. Կարո՞ղ են աշակերտները հաճախել CMHS, եթե նրանք Անգլերեն լեզու սովորողների ծրագրում են(ELL):
Այո: ELL-ի բոլոր աշակերտները սովորական անգլերենի կանոնավոր դասերի հետ **մեկտեղ** կտեղավորվեն **օժանդակող դասարանում**:

13. Ի՞նչ է block schedule-ը?
Կենտ օրեր –1, 3, 5, 7 դասաժամ ------ Զույգ օրեր –2, 4, 6, 7 դասաժամ
7-րդ դասաժամը միակն է, որը ամեն օր դաս կա:

14. Կարո՞ղ են Քլարքի աշակերտները մասնակցել թիմային մարզաձևերի:
Այո: Քլարքի բոլոր աշակերտները կարող են մասնակցել թիմային մարզաձևերի իրենց բնակավայրի դպրոցներում: Մարզական ավտոբուսները աշակերտներին տանում են իրենց բնակավայրի դպրոցները, ատլետիկայի 7-րդ դասաժամի համար, որը սկսվում է կեսօրից հետո ժամը 2: 00-ին:
Ծնողները պատասխանատու են օրվա վերջին իրենց աշակերտներին բնակավայրի դպրոցից վերցնելու**:**

15. Կարո՞ղ են Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանից դուրս բնակվողները դիմել CMHS ընդունվելու:
Ոչ: CMHS-ը ընդունում է միայն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սահմանների բնակիչների դիմումները:

16. Մասնավոր կամ ոչ GUSD դպրոց հաճախող աշակերտը, ով Գլենդելի բնակիչ է, կարո՞ղ է դիմել:
Այո: Եթե դուք ներկայում **Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի բնակիչ եք**, բայց դիմումի ընթացքում հաճախում եք Գլենդելի հանրային դպրոցներից բացի մի այլ դպրոց, կարող եք դիմել CMHS ընդունվելու:

17. Ինչպե՞ս կարող ենք ապացուցել, որ Գլենդելի բնակիչ ենք:
Դուք պետք է ներկայացնեք հետևյալ փաստաթղթերից երկուսը՝ ծնողի/օրինականան խնամակալի անունով

- **Ընթացիկ** և **օրիգինալ** կենցաղային սպասարկման ստացական՝ երկու ամսից ոչ ավելի վաղ: Կարող եք նաև տրամադրել երկու կենցաղային վճարման ստացական, բայց դրանք պետք է լինեն երկու առանձին կենցաղային ընկերություններից:
- Տան սեփականության փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս փակման ամսաթիվը:
- Վարձակալության պայմանագիր:
- Սեփական գույքի հարկի վճարման վերջին անդորրագիր:
- Վերջին աշխատավարձի կտրոնը
- Ներկայիս ընտրություններին մասնակցողի գրանցման անդորրագիրը:
- Հաղորդակցություն պետական գործակալության կողմից, թվականը գրված, ոչ ավելի քան երեք ամիսվա վաղեմության: (այսինքն՝ ավտոմեքենայի գրանցում, նամակներ welfare department, social security, IRS, homeland security և այլն ...)

* Եթե դուք չեք կարողանում տրամադրել բնակության վայրի ապացույց, ապա դիմումը չեղյալ կհամարվի և ձեր երեխան այլևս իրավունք չի ունենա հաճախել CMHS:

18. Վիճակահանությունից որոշ ժամանակ անց մենք տեղափոխվելու ենք Գլենդել: Կարո՞ղ է իմ երեխան մասնակցել վիճակահանությանը:
Ո՛չ: Կենցաղային ծառայության երկու ներկա ստացական պետք է ներկայացնել GUSD-ին մինչև դիմումների վերջնաժամկետը: Նման աշակերտները պետք է վիճակահանությունից հետո սպասման ցուցակագրման դնեն իրենց անունը կամ դիմեն հաջորդ տարվա վիճակահանության համար:

19. Մենք տուն գնելու գործընթացում ենք (30 կամ 60 օրվա ընթացքում), կարո՞ղ է իմ երեխան CMHS ընդունվելու դիմել:
Այո: Բոլոր մյուս փաստաթղթերը ներկայացնելու պահին անհրաժեշտ կլինի տրամադրել escrow-ի փաստաթղթի պատճենը, իսկ escrow-ն վերջանալուց հետո երկու ընթացիկ կենցաղային ստացականներ: Եթե չկարողանաք տրամադրել կենցաղային վճարումների ստացականներ, ապա նա կզրկվի դիմելու հնարավորությունից, և ձեր երեխան իրավունք չի ունենա հաճախել CMHS:

20. Գլենդելում մենք ունենք մի քանի սեփական տներ, բայց դրանց որևէ մեկում չենք ապրում: Կարո՞ղ ենք օգտագործել այդ տներից մեկի հասցեն, քանի որ մենք ենք սեփականատերը: Մենք նույնիսկ դրանց մի մասի համար վճարում ենք կոմունալ ծախսերը:

Ոչ: Բացի ձեր բնակավայրի հասցեից՝ ուր աշակերտը բնակվում է, որևէ այլ հասցե տրամադրելը կհամարվի կեղծ հասցե և հետևաբար դիմումը չեղյալ կհամարվի:

21. Իմ երեխան ապրում է իմ քրոջ/եղբոր/իր տատիկի/պապիկի ծնողների հետ Գլենդելում: Կենցաղային ծառայության ստացականները նրանց անունով է: Կարո՞ղ ենք տրամադրել նրանց ստացականները:
Միայն այն դեպքում, **եթե հարազատը աշակերտի օրինական խնամակալն է**, այդպիսի դիմումները կընդունվեն: GUSD-ը օրինական և իրավական փաստաթղթեր է հայցելու, հարազատների «խնամակալությունը» ապացուցելու համար, ինչպես նաև պահանջելու է բնակության վայրի ապացույց:

22. Իմ երեխան դեռ Միացյալ Նահանգներում չի բնակվում: Նա սովորում է այլ երկրում: Կարո՞ղ եմ տրամադրել նրա գնահատականները, որպեսզի նա հնարավորություն ունենա մասնակցելու վիճակահանությանը:
Ոչ: Աշակերտը վիճակահանության ընթացքում պետք է բնակվի ծնողի/խնամակալի հետ: Պետք է մատչելի լինեն նրա գնահատականները և ստանդարտացված քննության միավորները:

23. Ի՞նչ կլինի, եթե իմ երեխան բավարար գնահատականներ չստանա, երբ հաճախի CMHS:
Եթե ընդունելի պահանջներից որևէ մեկը ցածր է ընդունելի չափանիշներից, ապա աշակերտը կվերադառնա իր բնակավայրի դպրոցը:

24. CMHS- ում կա՞ հագուստի չափանիշ:
Այո: Աշակերտները պարտավոր են հետևել Քլարք մագնետ ավագ դպրոցի հագուստի չափանիշերին (տեղեկությունների համար այցելել www.gusd.net/clarkhs):

25. Ես արդեն մեկ երեխա ունեմ CMHS- ում: Իմ փոքր երեխան նախապատվություն կունենա՞:
Ոչ: Քույր/եղբոր նախապատվություն չի լինի ընդունելության համար. սակայն բացառություն են կազմում երկվորյակները:

26. Արդյոք երթևեկությունը հասանելի՞ է CMHS-ից և դեպի CMHS:
Այո: Գլենդել և Հուվերի ավագ դպրոցի սաները կարող են օգտվել փոխադրամիջոցից : Քլարք մագնետ ավագ դպրոցի 9-րդից 12-րդ դասարանների աշակերտների մեկ կիսամյակի փոխադրման համար գանձվում է $100 մեկ աշակերտի համար (տարեկան $200): (Ուսումնական օրենքի 39807.5 հոդված): Բյուջեի պատճառով հավանական է գնի ավելացում լինի:

27. Արդյոք CMHS-ի աշակերտները կարո՞ղ են մասնակցել արտդասարանային պարապմունքների:
Այո: Լրացուցիչ ուսումնական պարապմունքներ, ինչպիսիք՝ ակումբները և այլ մարզաձևերը մատչելի են Քլարք մագնետում, ըստ աշակերտների հետաքրքրությունների և հարմարությունների մատչելիության:
California Interscholastic Federation-ի (CIF) սպորտաձևերը կշարունակեն մատչելի լինել աշակերտների բնակավայրերի դպրոցներում, եթե իհարկե տեղ կա, և չկան դասացուցակի բախումներ (7-րդ դասաժամին):

28. Արդյոք կա՞ն լրացուցիչ կրթաշրջանի ֆորմեր, որոնք պետք է ստորագրեն ծնողները և աշակերտները:
Այո: Բոլոր աշակերտներն ու ծնողները պետք է ամեն տարի ստորագրեն Ծնողների/խնամակալների և աշակերտների Տեղեկատվական գրքույկի ֆորմերը, ներառյալ Էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների (EIS) ընդունելի օգտագործման համաձայնագիրը և արձակումը:

29.: CMHS-ում ծնողների համար կամավոր ծառայելու հնարավորություններ կա՞ն:
Այո: Ծնողներին խրախուսում ենք մասնակցել Քլարք մագնետ ավագ դպրոցի բոլոր ծրագրերին և միջոցառումներին:

ԲՈԼՈՐ 9-ՐԴ-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵՆ՝ ԱՄԲՈՋ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՔԼԱՐՔ ՄԱԳՆԵՏՈՒՄ ՄՆԱԼ: